ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սլովենիայի Հանրապետություն (Անկարան, Դեբելի Ռտիչ) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**
   Մերի Գասպարյան
   Կարինե Բադալյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության արտաքին կապերի վարչության գլխավոր մասնագետ,
   Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հավասար հնարավորությունների ապահովման վարչության երեխաների հիմնահարցերի բաժնի գլխավոր մասնագետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Սլովենիայի Հանրապետություն, 2024 թվականի սեպտեմբերի 28-ից հոկտեմբերի 6-ը

4. **Հրավիրող կողմը.**
   Սլովենիայի «Մարդու անվտանգության խթանում» (ITF) կազմակերպություն

5. **Գործուղման նպատակը.**
   «Լեռնային Ղարաբաղում զինված հակամարտությունից տուժած երեխաների հոգեբանական-սոցիալական վերականգնում» սոցիալական աջակցության ծրագրի շրջանակում Սլովենիա մեկնող 16 երեխաների խմբի ուղեկցողներ:
   Ծրագիրն իրականացվել է Սլովենիայի «Մարդու անվտանգության խթանում» (ITF) կազմակերպության, Սլովենիայի արտաքին և եվրոպական հարցերի նախարարության և ԵԱՀԿ-ում Ավստրիայի մշտական ներկայացուցչության աջակցությամբ:
   Ծրագրի շրջանակում 2024 թվականի սեպտեմբերի 28-ին Սլովենիա մեկնած խմբում ընդգրկված էին ՀՀ Գեղարքունիքի մարզից Արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում զոհված զինծառայողների ընտանիքների երեխաներ:
   Ծրագրի նպատակն էր երեխաներին հնարավորություն տալ համապատասխան սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծրագիր անցնել Սլովենիայի Կարմիր Խաչի Առողջության և երիտասարդության հանգստավայրում՝ Դեբելի Ռտիչում:

6. Քննարկված թեմաները.

Երեխաների համար նախատեսված համապարփակ վերականգնողական ծրագիրը ներառում էր տարբեր միջոցառումներ, ներառյալ՝ հիդրոթերապիա, դիմադրողականությունն ամրապնդող վարժություններ, ինչպես նաև հարուստ կրթական և ուսուցողական ծրագրեր, այդ թվում՝ նետաձգություն, լող, թիավարություն, խոհարարական դասընթաց, սլովենական ազգային երաժշտական գործիքի պատրաստում՝ հրավիրված երաժիշտի օգնությամբ:
Մասնավորապես իրականացվել են հետևյալ միջոցառումները.

1. Էքսկուրսիա դեպի ծովափնյա քաղաք Պիրան, այցելություն ակվարիում և շրջայց քաղաքում,
2. Հանդիպում անասնաբույժի հետ, ծանոթացում անասնաբույժի մասնագիտությանը,
3. Հոգեսոցիալական վերականգնմանն ուղղված խաղեր և վարժանքներ,
4. Լողի իմացության ստուգում և լողի դաս հրահանգչի ուղեկցությամբ,
5. Կայակի դաս,
6. Շրջայց առողջարանում և այգում, ծովափի ուսումնասիրում և ծանոթացում «Կախարդական պուրակին»,
7. Նետաձգություն, ֆուտբոլ, բասկետբոլ, լողափնյա վոլեյբոլ,
8. Այցելություն խեցիների ափ,
9. Այցելություն Լիպիցայի ձիաբուծարան,
10. Իստրիական ավանդական երաժշտության հետ ծանոթացում
11. Իստրիական ձիթաբլիթների պատրաստում Ռոզանա Պրեշերենի հետ,
12. Հանդիպում հովանավորների հետ:

Ծրագիրը շատ հագեցած էր, բովանդակալից: Լողի դասերի արդյունքում երեխաների զգալի մասը լողալ սովորեց: Ճամբարում երեկոյան ժամերին կազմակերպվում էին նաև տարբեր բացօթյա խաղեր:
Երեխաների համար ուղևորությունը և Սլովենիայում անցկացրած հանգիստը շատ տպավորիչ էր, սոցիալ-հոգեբանական վերականգնողական առումով այս ծրագիրը շատ մեծ կարևորություն ունեցավ երեխաների համար:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Սլովենիա աշխատանքային այցի շրջանակներում ս.թ. հոկտեմբերի 5-ին Լիպիցայի ձիաբուծարան էքսկուրսիայի ընթացքում երեխաների հետ հանդիպման էր եկել Սլովենիայի Հանրապետության նախագահի ամուսինը՝ Ալեշ Մուսարը, Չեխիայում Հայաստանի Հանրապետության Արտակարգ և լիազոր դեսպան Աշոտ Հովակիմյանը՝ տիկնոջ հետ, դեսպանության երկրորդ քարտուղար Արամ Քարամյանը, Սլովենիայի «Մարդու անվտանգության խթանում» կազմակերպության ղեկավար (ITF) Տոմաժ Լովրենչիչը, ծրագրի պատասխանատու Նատաշա Ուրշիչը և կազմակերպության այլ ներկայացուցիչներ, Դեբելի Ռտիչի Առողջարանային համալիրի տնօրենը: Ալեշ Մուսարը երեխաներին պատմեց լիպիցյան ձիերի, դրանց խնամքի մասին, երեխաներին նվիրեց շապիկներ:

Նույն օրը առողջարանի պայմաններին ծանոթանալու նպատակով Դեբելի Ռտիչ առողջարան այցելեց Չեխիայում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Աշոտ Հովակիմյանը՝ տիկնոջ հետ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Որոշումներ չեն ընդունվել, փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Փոխհամաձայնության դեպքում՝ առաջարկվում է շարունակել սլովենական կողմի հետ համագործակցությունը սույն ծրագրի շրջանակում՝ հաշվի առնելով երեխաների համար հոգեբանական-սոցիալական վերականգնում անցնելու, ինչպես նաև սլովենական մշակույթին ու պատմությանը, տեսարժան վայրերին ծանոթանալու, միաժամանակ նաև՝ հյուրընկալող կողմին Հայաստանի մշակույթն ու պատմությունը, ազգային արժեքները ներկայացնելու հնարավորության կարևորությունը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

Մերի Գասպարյան

Կարինե Բաղալյան

10.10.2024